

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿՉԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Այս հոդվածը Գորիսի տարածաշրջանում մաթեմատիկական կրթության պատմությունն ուսումնասիրելու իմ առաջին փորձն է և դիտարկվում է երկու հարց՝ մաթեմատիկական կրթությունը Գորիսի տարածաշրջանում և գորիսյան մաթեմատիկական գիտական դպրոցի կազմավորումը Գորիսի պետական համալսարանում (1967-2017):

Բանալի բառեր՝ կրթական կենտրոն, մաթեմատիկայի պատմություն, մաթեմատիկական կրթություն, ֆիզիկամաթեմատիկական գիտություններ, մաթեմատիկական գիտական դպրոց:

1) ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Որպես կրթական կենտրոն՝ Սյունիքը հայտնի է եղել հնագույն ժամանակներից[1,4]: Պահպանվել են մաթեմատիկական կրթության անհերքելի ապացույցներ. դրանք Քարահունջ գյուղի հարակից տարածքում վերխոյացող մեգալիթներն են, որը ըստ Պ. Հերոմուս ուսումնասիրությունների՝ քարե հնագույն աստղադիտարան է[2]: Պատմական փաստերի բերումով անցած վերջին դարերի ընթացքում Գորիսի այժմյան տարածքում մաթեմատիկական գիտությունների ասպարեզում չի եղել համակարգված ոչ մի գիտական աշխատանք: Տարածաշրջանում միակ գիտական գործունեությունն արտահայտվում էր նրանով, որ ծխական դպրոցներում ուսուցիչները զբաղվում էին պարզունակ ուսումնասիրություններով: Խորհրդայնացումից անմիջապես հետո Հայաստանում սկսվեց իրականացվել կրթական և մշակութային նոր քաղաքականություն: Դպրոցն անջատվեց եկեղեցուց, փակվեցին մասնավոր դպրոցները, կրթությունը դարձավ անվճար: 1921թ. սեպտեմբերի 21-ին ՀԽՍՀ ժողովուրդի որոշում ընդունեց չափահաս բնակչության անգրագիտությունը վերացնելու մասին: Գորիսի տարածաշրջանում ստեղծվեցին անգրագիտության վերացման կայաններ (լիկկայաններ): Մինչև 1940թ.-ը հիմնականում անգրագիտությունը վերացվեց: Գրագետ էր դարձել բնակչության ավելի քան 80%-ը[5]: 1960-ական թվականների սկզբից Գորիսի տարածաշրջանի առջև ծառայած սոցիալ-տնտեսական վերափոխումների հիմնահարցը: Ստեղծվում, վերակառուցվում էին արդյունաբերական ձեռնարկություններ, բացվում նոր մասնաճյուղեր: Արդյունաբերության զարգացման այդպիսի ընթացքը նոր պահանջներ առաջադրեց գիտության նկատմամբ: Առավել ընդգծվում էր ֆիզիկամաթեմատիկական գիտությունների նշանակությունը: Քայլեր ձեռնարկվեցին բարձրագույն ուսումնական հաստատություն ստեղծելու ուղղությամբ, որը կհանդիսանար շուրջ 6 դար առաջ գործած Տաթևի հռչակավոր համալսարանի՝ Սյունիքի առաջին բարձրագույն ուսումնական հաստատության շարունակությունը: Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի՝ 1967թ.-ի հոկտեմբեր-

րի 1-ի որոշմամբ Գորիս քաղաքում կազմակերպվում է Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղ՝ մաթեմատիկայի և ֆիզիկայի ֆակուլտետներով: Այսպիսով ստեղծվեցին բարենպաստ պայմաններ մաթեմատիկական գիտելիքների լայն տարածման և մաթեմատիկայի զարգացման համար: Գորիսի պետական համալսարանում բարձրագույն մաթեմատիկայի դասավանդումն սկսվել է համալսարանի հիմնադրման օրվանից՝ մաթեմատիկայի ֆակուլտետում: Համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի պատմությունը, ելնելով ֆակուլտետի կառուցվածքից ու նպատակադրումից, դասախոսական կազմի որակից և այլ հանգամանքներից, պայմանականորեն կարելի է բաժանել երեք ժամանակաշրջանների:

Առաջին ժամանակաշրջանն ընդգրկում է 1967-1984 թվականները: Այդ տարիներին ֆակուլտետը մանկավարժական էր, պատրաստում էր բացառապես մաթեմատիկայի ուսուցիչներ՝ հանրակրթական դպրոցների համար: Այդ նպատակին էին հարմարեցված ուսումնական պլաններն ու ծրագրերը, որոնց մեջ զգալի տեղ էին գրավում մանկավարժական ու մեթոդական առարկաները և քիչ ժամաքանակ էր հատկացվում մաթեմատիկայի նորագույն բաժինների ուսումնասիրությանը: Գորիս եկան հրավիրված դասախոսներ Շ. Սահակյանը, Լ. Շահինյանը, Ֆ. Հարությունյանը, Վ. Գևունին, Ս. Հակոբյանը, Գ. Բաղդասարյանը: Նրանց գործունեությունն ուղղված էր եղել մեկ հիմնական նպատակի՝ պատրաստել ուսուցիչներ և գյուղական վայրերում հանրակրթական դպրոցներն ապահովել ուսուցիչներով: Եվ այդ պարտականությունը նրանք կատարել են պատվով: Նրանք շնորհակալ գործ են կատարել՝ ուսումնական պրոցեսի կազմակերպման, մայրենի լեզվով դասախոսություններ կարդալու, դասախոսական կազմի համալրման և այլ ասպարեզներում. այդ տարիներին ֆակուլտետի դասախոսական կազմը համալրվում էր նոր, երիտասարդ մասնագետներով (Վ. Բաբայան), հիմնականում ֆակուլտետի առաջին տարիների շրջանավարտներից (Վ. Նարինյան): 1970 թ.-ից ֆակուլտետ դասախոսական աշխատանքի էր հրավիրվել նաև ԵԴՀ շրջանավարտ, երիտասարդ շնորհալի մաթեմատիկոս, ֆիզմաթ գիտ. թեկնածու Ա. Մարտիրոսյանը, ով բարձր մակարդակով դասախոսություններ էր կարդում դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների և մի շարք այլ առարկաների գծով:

Երկրորդ ժամանակաշրջանն ընդգրկում է 1984-1999թթ.-ը: Այդ ժամանակ ֆակուլտետն ըստ էության դառնում է համահամալսարանական ֆակուլտետ, և սկսում է որակյալ մասնագետներ պատրաստել ոչ միայն միջնակարգ դպրոցների համար: Այդ տարիներին ֆակուլտետի դասախոսական կազմը շարունակաբար համալրվում է նոր, երիտասարդ մասնագետներով (Յու. Սաֆարյան, Հ. Մալինցյան, Վ. Վարդագարյան):

Երրորդ ժամանակաշրջանն ընդգրկում է 1999-ից մինչև մեր օրերը: Այս տարիներին առաջին փորձերն են արվել պատրաստելու ՏՏ բնագավառում հետազոտող մասնագետներ. ներդրվել են «Կիրառական մաթեմատիկա», «Մաթեմատիկա, ինֆորմատիկա» մասնագիտությունները, կազմակերպվում է մագիստրոսական կրթությունը: Նոր պահանջներին համապատասխան՝ Էական փոփոխություններ մտցվեցին ուսումնական պլաններում ու ծրագրերում, զգալի չափով ուժեղացվեցին մասնագիտական հատուկ դասընթացներն ու սեմինարները:

Այսպիսով, ֆակուլտետի դասախոսական կազմը հիմնականում բաղկացած էր երիտասարդ մաթեմատիկոսներից, որոնք ասպիրանտուրայում մաթեմատիկական հարուստ գիտելիքներ էին ձեռք բերել և առաջին փորձերն էին արել գիտական-ստեղծագործական աշխատանքի բնագավառում: Նրանցից շատերը հիմնական մաթեմատիկական առարկաները դասավանդում էին համալսարանական լրիվ ծրագրերով ու գիտական բարձր մակարդակով, առաջին անգամ սկսեցին կարդալ մասնագիտական հատուկ դասընթացներ, կազմակերպվեցին գիտական սեմինարներ՝ բարձր կուրսերի ուսանողների մասնակցությամբ: Ուսանողները, ժամանակակից բարձր մակարդակով մաթեմատիկական կրթություն ստանալով, միաժամանակ ծանոթանում էին չլուծված գիտական խնդիրներին, նրանց լուծման մեթոդներին, աստիճանաբար ներգրավվում գիտահետազոտական աշխատանքի ոլորտ:

1967-2017թթ. դոկտորական ատենախոսություններ են պաշտպանել Ա. Մարտիրոսյանը, Յու. Սաֆարյանը: Թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել Ռ. Մուսայեյանը, Վ. Վարդագարյանը, Ա. Դինունցը, Ա. Դավթյանը:

2) ԳՈՐԻՍՅԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ(1967-2017)

Ֆակուլտետի պատմության համառոտ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ համալսարանում ինքնուրույն գիտական ստեղծագործական աշխատանքներն սկսվել են 1973 թվականից: Այդ գործում առանձնապես մեծ վաստակ ունեն այն ժամանակ դեռ երիտասարդ մաթեմատիկոս Ա. Մարտիրոսյանը: 1973թ. ասպիրանտուրան ավարտելով և վերադառնալով Գորիս, նա կարողանում էր հաջողությամբ զուգակցել գիտական ու դասախոսական աշխատանքները: Կոմպլեքս տիրույթում ֆակտորիզացիաների տեսության գծով իր հետազոտությունների արդյունքներն ամփոփելով՝ 1990թ. նա հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն և դառնում Սյունիքում առաջին դոկտորը ֆիզիկամաթեմատիկական գիտությունների գծով:

Նա մի կողմից շարունակում էր արդյունավետ գիտահետազոտական աշխատանքները, ստանում մի շարք արժեքավոր արդյունքներ: Սյուն կողմից նա բացառիկ դեր կատարեց Նոր, երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Ա. Մարտիրոսյանը մեկուսացած, ինքնամփոփ գիտնական էր: Նա իր մտքերին ու գիտական հետազոտությունների արդյունքներին հաղորդակից էր դարձնում ուսանողներին: Նա կարողանում էր նկատել առավել շնորհալի ուսանողներին, նրանց մեջ հետաքրքրություն առաջացնել դեպի մաթեմատիկական, աշխատասիրություն սովորեցնել և հոգատարությամբ աճեցնել ու պատրաստել գիտական գործունեության համար: Դեռևս 1984 թվականից նրա ղեկավարությամբ ընդգրկվել էին մի խումբ շնորհալի ուսանողներ, դասախոսներ: Արցախյան պատերազմի առաջին տարիներին նրանք ցրվեցին: Սակայն Ա. Մարտիրոսյանը սիրով շարունակում էր պարապել Նոր ուսանողների հետ: Ա. Մարտիրոսյանի ամենօրյա գիտական շփումները Գորիսի պետական համալսարանում ձևավորեց գորիսյան ինքնատիպ մաթեմատիկական գիտական դպրոց: Դպրոցի ձևավորման սկզբնական և ամրապնդման շրջաններում անգնահատելի օգնություն է ցույց տվել անվանի գիտնական Ա.Գ. Բագդուրը[3]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Օրբեյան, Սյունիքի պատմություն, Եր., «Սովետական գրող» հրատ., 1986թ., 614 էջ:
2. Ս. Հախվերդյան, Ա. Ստեփանյան, Գորիսի ամփոփ պատմություն, Եր., «Չանգակ-97» հրատ., 2005թ., 448 էջ:
3. Сборник трудов 6 международной конференции «Проблемы динамики взаимодействия деформируемых сред», 21-26 сентябрь, Горис-Степанакерт, 2008г.
4. Գ. Պետրոսյան, Սաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Եր., ԵՊՀ հրատ., 1959թ., 437 էջ:
5. Բնագիտության և տեխնիկայի պատմությունից, Գիտական աշխատությունների ժողովածու: Խմբ. կոլեգիա՝ Գ.Բ. Պետրոսյան (գլխ. խմբ.) և ուրիշ.: ՀՍՍՀ ԳԱ Բնագիտության և տեխնիկայի պատմության խորհուրդ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976թ.:

ВОЗНИКНОВЕНИЕ И РАЗВИТИЕ МАТЕМАТИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В ГОРИССКОМ РЕГИОНЕ - АРПИНЕ ДИНУНЦ - Эта статья является моей первой попыткой изучения истории математического образования в Горисском регионе и рассмотрены только два вопроса: математическое образование в Горисском регионе и формирование Горисской математической научный школы в Государственном университете Гориса (1967-2017).

Ключевые слова: Учебный центр, история математики, математическое образование, физико-математические науки, математическая научная школа.

ORIGINS AND FURTHER DEVELOPMENT OF THE MATHEMATICAL EDUCATION IN GORIS REGION - ARPINE DINUNTS - The paper is my first attempt to study the history of mathematical education in Goris region and there is considers only two questions: the mathematical education in Goris region and the formation Goris mathematical scientific school at the Goris State University (1967-2017).

Key words: Educational center, history of mathematics, mathematical education, physical and mathematical sciences, mathematical scientific school.